

վեր դէպ ի արեւմուտք կ'երկարէր այնչափ որ Հալիս գետը (արդի Թրք. Գրզըլ-Հրմագ) կը բղկէր Հայաստանի լեռներէն (Ὁ Ἄλως... ῥέει ἐξ Ἀρμενίου οὐρέος, Հերոդ. Ա, 72): Ուստի կը պարունակէր առնուազն գետոյն ակնաղբերաց աշխարհն Երզնկայի արեւմտակողմէն գոնէ մինչեւ Սեբաստիա, եւ որ քիչ մ'ետքն անձուկ մտօք ուրոյն «Փոքր Հայք» (Armenia minor) կոչուեցաւ: Եւ այս Փոքր-Հայքն է որ յետոյ ունեցաւ վերոյիշեալ մանր ազգաց ծովեզերքը: Երբ Սելեւկեանց Անտիոքոս Մեծ որոշիչ պարտութիւն կրեց Հռոմայեցիներէն Մագնեսիոյ քով (190 Մ. Ք.), ուրիշ երկիրներու հետ՝ անկախ եղաւ Հայաստան ալ: Բայց դարձեալ կրկին՝ երկու Թագաւորներով՝ Արտաշէս եւ Ջարեհ («Ջարիադրէս»), Մեծագոյն մասն էր Արտաշէսի «Մեծ Հայք» (Armenia maior), որ բաց ի Կարին ու Դերջան գաւառներէ՝ որոնք յատկապէս կը շեշտուին, կը պարունակէր «Պարիսարի ստորոտը» (Ստրաբոն, c. 528 Παρώρεια τοῦ Παριάδρου), Կղարջքն եւն: Հին Հայաստանի աշխարհագրութեան նորագոյն քննիչը՝ Հիւբշման՝ «Պարխարի ստորոտը» կը հասկընայ Տայոց աշխարհը,